## ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ*

64. Պուլկարիոյ մէջ ներկայիս կը գտնուին 15 ազգային վարժարաններ․ 1327 աշակերտ․ տարեկան ծախքն կը հաշուի 54151 ֆրանք։

65. Թրքահայ որբերու համար Նիւ Եորքի Հայուհեաց Որբախնամ ընկերութիւնը տօնավաճառ մը կազմելով զուտ հասոյթի 479,36 տոլար հաւաքեր են։

66. Տանօթ գրագէտ Պ. Կ. Բասմաջեան Բարիզու «Ասիական ընկերութեան» կանոնաւոր անդամ ընտրուած է. ի սրտէ խնդակցութիւններս հրապարակաւ կը յայտնենք։

67. Հայ կանանց դաստակարգը՝ Եգիպտոսի մէջ «Արտէմիս» անուամբ ամսական հանդէս մը պիտի ունենայ. խմբագրութիւնն պիտի վարեն Հայ գրագիտուհիներ. և թերթին նպատակն պիտի ըլլայ Հայ կնոջ դաստիարակութիւնը։

68. Ռոստովի մէջ հանգուցեալ Լոյսպարոն Բուլթրեան կտակեր է 3000 րբ. Նոր Նախիջեւանի թեմական դպրոցին. 3000 րբ. արուեստագիտական վարժարանին, 3000 րբ. ալ Հոփսիմեան օրիորդաց վարժարանին։

69. Պէրպէրեան վարժարանի հիմնարկութեան քսանեւհինգամեայ յոբելեանը հանդիսաւորապէս տօնելու համար, Կ. Պոլսոյ ազգային թերթերը՝ միաբերան ամիսներէ ի վեր անդադար ամէն տեսակ յայտարարութիւն ու տեղեկութիւններ կը հրատարակեն, վերջին յայտարարութենէն կ'իմանանք որ այդ հանդիսի որոշ օրն է տարւոյս հոկտեմբեր 1. յոբելեանին մասնաժողովը այժմ կը խնդրէ ամէն ուսուցիչներէն որ նիւթական նպաստներ հանգանակեն և յղեն առ յանձնաժողովն որ այդ գումարով յիշատակելի նուէր մը ընծայեն գիտուն ու դաստիարակ յոբելեարին. Պ. Պէրպէրեան արժանի է այս համակրական ցոյցերու, բայց ո՞ւր մնաց ալեզարդ Ութիւճեան արդիւնաւոր և երիցագոյն խմբագրապետին յոբելեան հանդէսը. յուսանք ջուրը չիյնար։

70. Ամերիկահայ հատուածականութիւնը տեղացի ազգային թերթերու մէջ իրենց հոգեւոր հովիւներու մասին տժգոհութիւն յայտնելէն չի դադրիր. և ինչպէս կարելի է գոհ մնալ այդ առաջնորդներէն, որոնց պէտերն բնաւ նկատողութեան չեն առներ իրենց փոխանորդներու չէ գովելի ընթացքը և տարամերժեալ հայրենի հօտը լքեալ ու անմխիթար կը թողուն։

71. Ռուսահայ և Թրքահայ լրագիրները Աստրախանի հոգեւոր առաջնորդի փոփոխութեան համար բաւական լուր հաղորդեցին. մեզ ևս այդ խնդրոյ մասին յատուկ թղթակցութիւն մը հասաւ զոր չի հրատարակեցինք թերթիս ուղղութենէն դուրս համարելով. այժմ կը լսենք որ այդ տեղւոյն առաջնորդութիւնը յանձնուած է հայութեան մեծ մասին սիրելի գիտուն Սեդրակեան արքեպիսկոպոսի, տակայն նա կը գրէ առ Ազգապետն. «Ոչ կամիմ և ոչ իսկ կարեմ ստանձնել զայն պաշտօն»։

72. Ռուսահայ Տ. Գաբրիէլ Կարախանեանց 8000 րբ. Գէորգեան ճեմարանին կտակեր է. պայմանաւ որ այդ գումարին տոկոսով ճեմարանին մէջ Մոզդոկեցի տղաքներ դաստիարակուին։

73. Շուշիի մէջ հանգուցեալ Բ. Թունիբէգեանցի հարստութիւնը կը բաժնուի ազգային հաստատութեանց. թեմական վարժարանին 8000 րբ. 1000 րբ. Մեղրածոց եկեղեցիին, 1000 րբ. տեղւոյն երկու օրիորդաց վարժարաններուն. 200 րբ. աղքատ աշակերտաց. 400 րբ. տեղւոյն չորս եկեղեցիներուն 4000 րբ. արժողութեամբ դրամներ Էջմիածնի թանգարանին։

74. Պ. Սմբատ Բիւրատի «Փիւնիկ» թերթն սկսած է վերստին հրատարակուիլ։ Խնդակցութիւնք։

75. «Նոր կեանք»ի խմբագիր Պ. Ա. Արփիարեան քաշուած է իր արդիւնաւոր խմբագրական պաշտօնէն, Հայ լրագրութենէն վարպետ ու փորձ գրիչներու հեռանալն մխիթարական չէ։

* Տար. տես Յուլիս 1901 ։

## ՆԱՄԱԿԱՆԻ

ՓԱՐԻԶ. — Պ. Մ. Զ. — Միաբանութեանս յոբելեանը կը կատարուի Ն. Տ. Սեպտեմբեր 8ին։

ԳԱՀԻՐԷ. — «ՆՈՐ-ՕՐ». — Կը խնդրենք ձեր օրագրին առաքումը կանոնաւորել։

Կ. ՊՈԼԻՍ. — Պ. Տ. Ճ. — «Գեղունի» Կ. Պոլսոյ համար կ'արժէ 3 նափոլէոն. «Բազմավէպ»ի բաժանորդք՝ փոխարէն ուրիշ պատմական գիրք մը կը ստանան։

ԱՐՄԱՇ. — ՄԽԾ. Տ. Վ. — Հեռի վենետիկեան նուազագ լճակէն, Նոճիներու խնկաւէտ ստուերին տակ հասաւ ձեր գորովական ու գրական զեփիւռն։ Առանձին գրութեամբ կը պատասխանենք։

ԵՐՈՒՍ. — Գ. Տ. Մ. — Ստացած ենք շնորհակալութեամբ ձեր ղրկած յօդուածը և կը յուսանք տպագրել և կատարել նոյնպէս ձեր խնդիրքը։

ՕՐԴՈՒ. — ՅԱՐ. ՂԱԶԱՐ. — Ստացած ենք ձեր քարտը, բայց ոչ բաժնեգինը, զոր յղած եմ կ'ըսէք նոյն քարտին մէջ։

digitised by A.R.A.R.@